

ԿԱՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

**ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ
ԱՊԱՀՈՎՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ
ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԻՆ ՀԱԿԱԶԴԴՄԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱԿԱՐԳԵՐԸ**

Սույն հոդվածը վերլուծում է շրջակա միջավայրի պահպանության ոլորտի ժամանակակից հիմնախնդիրները՝ Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի համատեքստում: Աշխատանքում դիտարկվում է մարդու սահմանադրական իրավունքների պաշտպանության նյութական և ինստիտուցիոնալ շրջանակը: Ուսումնասիրվում են ներպետական էկոլոգիական խնդիրների հետևանքով առաջացող ժամանակակից մարտահրավերները: Միաժամանակ, վերլուծվում են այդ խնդիրների սահմանադրաիրավական ու օրենսդրական կարգավորման առանձնահատկությունները:

Հատուկ ուշադրություն է դարձվում Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունների և մարդու իրավունքների միջազգային չափորոշիչների ազդեցությանը ազգային իրավակարգի զարգացման վրա:

Միաժամանակ, դիտարկվում է ժամանակակից մարտահրավերներին հակազդող սահմանադրաիրավական կառուցակարգերի կատարելագործման անհրաժեշտությունը:

Հոդվածում հիմնավորվում է, որ շրջակա միջավայրի պահպանության ոլորտում պետության գործառույթները պետք է դուրս գան ձևական վարչարարության շրջանակից: Պետության գործառույթները պետք է մեկնաբանվեն որպես ակտիվ, կանխարգելիչ և մարդակենտրոն պարտականություններ: Այս մոտեցումը հատկապես պարտադիր է դառնում այն դեպքերում, երբ առկա են մարդու կյանքի ու առողջության համար կանխատեսելի ռիսկեր:

Հիմնաբառեր՝ շրջակա միջավայր, կայուն զարգացում, սահմանադրական պարտավորություններ, մարդու իրավունքներ, բնապահպանական անվտանգություն, օդի աղտոտում, հողի աղտոտում, ծանր մետաղներ, հանքարդյունաբերական աղտոտում, կենսամոնիթորինգ, սննդային շղթայի աղտոտում, կայուն օրգանական աղտոտիչներ (POPs), դիօքսիններ, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում (ՇՄԱԳ/ EIA), ռազմավարական բնապահպանական գնահատում (SEA), առողջության վրա ազդեցության գնահատում (HIA), կոնվենցիոն պատասխանատվություն, կանխարգելիչ վերահսկողություն:

Ներածություն

Ժամանակակից աշխարհում շրջակա միջավայրի պահպանության խնդիրը դուրս է եկել զուտ էկոլոգիական շրջանակներից: Այն վերաճել է համապարփակ հիմնախնդրի՝ վերածվելով իրավական, սոցիալական և քաղաքական առաջնահերթության:

Կլիմայի փոփոխությունը, կենսաբազմազանության կորուստը, բնական պաշարների սպառումը և արդյունաբերական աղտոտումը անմիջական սպառնալիք են մարդու կյանքի, առողջության ու արժանապատիվ կեցության համար: Այս համատեքստում պետությունների իրավական համակարգերը կոչված են ապահովելու շրջակա միջավայրի արդյունավետ պաշտպանություն: Դրա իրագործումը պահանջում է ազգային օրենսդրության շարունակական համապատասխանեցում միջազգային չափանիշներին և ստանձնած պայմանագրային պարտավորություններին:

Ժամանակակից իրավակարգերում շրջակա միջավայրի պահպանության իրավական կարգավորումն աստիճանաբար դուրս է գալիս զուտ վարչարարական կամ տեխնիկական վերահսկողու-

թյան շրջանակից: Այն ձեռք է բերում սահմանադրաիրավական նշանակություն՝ դիտարկվելով որպես մարդու հիմնարար իրավունքների պաշտպանության անբաժանելի մաս , :

Միջազգային իրավական դոկտրինայում և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ Եվրոպական դատարան) նախադեպային պրակտիկայում շրջակա միջավայրի պահպանությունը դիտարկվում է որպես մարդու հիմնարար իրավունքների արդյունավետ իրացման նախապայման: Այն առանցքային նշանակություն ունի հատկապես կյանքի, ինչպես նաև անձնական ու ընտանեկան կյանքի հարգման իրավունքների համատեքստում:

Հայաստանի Հանրապետության համար շրջակա միջավայրի պահպանության խնդիրն ունի առանձնահատուկ նշանակություն: Դա պայմանավորված է ոչ միայն աշխարհագրական ու սոցիալ-տնտեսական պայմաններով, ինչպես նաև առանձին տարածաշրջաններում արդյունաբերական և հանքարդյունաբերական գործունեության բարձր խտությամբ: Իրավական համակարգի զարգացումը նոր հնարավորություններ է ստեղծում

www.aradaradutyjournal.com

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

շրջակա միջավայրի պահպանության կառուցակարգերի կատարելագործման համար: Այս հարցադրումը հատկապես արդիական է ներկայումս ընթացող սահմանադրական բարեփոխումների համատեքստում:

Միաժամանակ, այն առանցքային նշանակություն ունի վարչաիրավական այն փոփոխությունների համար, որոնք նպատակ ունեն կատարելագործել պետական կառավարման համակարգը:

Շրջակա միջավայրի պահպանության հիմնախնդիրների գիտական վերլուծությունը պահանջում է համեմատական վերլուծության մոտեցում: Հետազոտությունը հիմնված է բազմաշերտ իրավական բազայի վրա, որը ներառում է ազգային իրավական կարգավորումները և միջազգային պայմանագրերը:

Առանձնահատուկ ուշադրություն է դարձվում Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի վերլուծությանը: Տեսական դրույթները համադրվում են Հայաստանի Հանրապետությունում առկա փաստացի և վիճակագրական տվյալների հետ: Հենց այս համատեքստում սույն հոդվածը նպատակադրում է ձևավորել շրջակա միջավայրի պահպանության համալիր սահմանադրաիրավական գնահատական: Այն ուղղված է իրավական և ինստիտուցիոնալ բարեփոխումների գիտական հիմնավորմանը:

Մեթոդներ

Հետազոտությունը ներառել է սահմանադրական և իրավական նորմերի, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի և շրջակա միջավայրի քաղաքականությունն ու մարդու իրավունքների պաշտպանությունը կարգավորող փաստաթղթերի վերլուծություն: Օգտագործել են համեմատական իրավական մեթոդ, համակարգային մոտեցում և նկարագրության ու մեկնաբանության վերլուծական մեթոդներ: Այս մեթոդները թույլ են տվել բացահայտել շրջակա միջավայրի անվտանգության սահմանադրական նշանակությունը և որոշել պետական վերահսկողության կանխարգելիչ մեխանիզմները ամրապնդելու անհրաժեշտությունը:

Շրջակա միջավայրի պահպանության ժամանակակից հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում

Սահմանադրական իրավունքի ժամանակակից զարգացման պայմաններում շրջակա միջավայրի պահպանության հիմնախնդիրները ձեռք են բերել նոր որակներ: Հայաստանի Հանրապետությունում դրանք ձևավորում են սահմանադրաիրավական նշանակություն ունեցող հարաբերությունների համալիր ամբողջություն: Այն անմիջականորեն առնչվում է մարդու կյանքի իրավունքի (Կոնվենցիայի 2-րդ հոդված) և անձնական ու ընտանե-

կան կյանքի հարգման իրավունքի (Կոնվենցիայի 8-րդ հոդված) արդյունավետ իրացմանը:

Միաժամանակ, այս հիմնախնդիրը ուղղակիորեն պայմանավորում է պետության պոզիտիվ պարտավորությունների ծավալն ու բովանդակությունը⁴: Եվրոպական դատարանը կայուն նախադեպային իրավունք է ձևավորվել: Համաձայն այդ մոտեցման՝ շրջակա միջավայրի լուրջ և շարունակական վտանգները կարող են որակվել որպես Կոնվենցիայի 2-րդ և 8-րդ հոդվածների խախտում:

Սա վերաբերում է նաև այն դեպքերին, երբ այդ վտանգները անմիջականորեն չեն հանգեցնում մարդու մահվան կամ տվյալ պահին առողջական ծանր հետևանքների: Բավարար է, որ նշված վտանգները ստեղծեն մարդու կյանքի ու առողջության համար իրական և կանխատեսելի ռիսկեր^{5,6,7,8}:

Եվրոպական դատարանը նման դեպքերում փաստացի վնասից զատ հաշվի է առնում նաև պետության ձեռնարկած անհրաժեշտ կանխարգելիչ ու վերահսկողական միջոցները: Դրանց նպատակն է նվազեցնել կամ կանխել հնարավոր վտանգները դեռևս ռիսկերի վաղ փուլում: Հայաստանի Հանրապետությունում առկա էկոլոգիական ռիսկերը հիմնավորվում են կոնկրետ փաստական տվյալներով: Դրանք վկայակոչված են ինչպես պետական գերատեսչությունների, այնպես էլ միջազգային հեղինակավոր վիճակագրական աղբյուրների կողմից:

Առողջապահության համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) տվյալներով՝ 2021–2023 թվականներին Երևանում օդի PM2.5 միկրոմասնիկների միջին տարեկան կոնցենտրացիան կազմել է մոտ 35–40 $\mu\text{g}/\text{m}^3$: Այս ցուցանիշը յոթ-ութ անգամ գերազանցում է ԱՀԿ-ի կողմից առաջարկվող անվտանգ շեմը, որը սահմանված է 5 $\mu\text{g}/\text{m}^3$: Նշված ցուցանիշը բազմակիորեն գերազանցում է առողջության պահպանման համար ընդունելի մակարդակը: Առողջապահության համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) գնահատականների համաձայն՝ շրջակա միջավայրի աղտոտվածությունն ուղղակիորեն կապված է շնչառական և սրտանոթային հիվանդությունների աճի հետ:

Միաժամանակ, այն զգալիորեն բարձրացնում է բնակչության վաղաժամ մահացության ռիսկը: Միավորված ազգերի կազմակերպության (ՄԱԿ) Շրջակա միջավայրի ծրագիրը (UNEP) և Համաշխարհային բանկը իրենց համատեղ գեկույցներում անդրադարձել են Հայաստանի էկոլոգիական վիճակին: Ըստ դրանց՝ շրջակա միջավայրի աղտոտմամբ պայմանավորված հիվանդությունները կազմում են երկրի համախառն հիվանդաբեռի շուրջ 7–8%-ը:

Միաժամանակ փաստվում է, որ միայն օդի աղտոտման հետևանքով տարեկան գրանցվում է

www.aradaradutyjournal.com

մի քանի հազար վաղաժամ մահվան դեպք^{9, 10, 11, 12, 13, 14, 15} : Այս գործոնները շրջակա միջավայրի աղտոտվածությունը վերածում են մարդու կյանքի իրավունքի իրացման իրական սպառնալիքի: Այն դառնում է անմիջական խոչընդոտ պետության կողմից իր սահմանադրական պոզիտիվ պարտավորությունների լիարժեք կատարման ճանապարհին: Հատկապես բարձր ռիսկայություն ունեն հանքարդյունաբերական շրջանները: Հայաստանի հյուսիսային մարզերում իրականացված դաշտային և լաբորատոր հետազոտությունները վկայում են լուրջ էկոլոգիական աղտոտվածության մասին:

Լոռու մարզի մի շարք համայնքներում ծանր մետաղներ են հայտնաբերվել ոչ միայն հողերում ու նստվածքներում, այլև բնակչության կենսաբանական նմուշներում՝ մազերում և մեզում:

Մասնավորապես՝ մկնդեղի, կադմիումի, պղնձի և կապարի կոնցենտրացիաները մի շարք դեպքերում գերազանցում են ոչ միայն Հայաստանի Հանրապետության, այլև՝ միջազգային սահմանված թույլատրելի չափանիշները:

Մասնավորապես, չեխական «Առնիկա»-Թունավոր նյութերի և թափոնների ծրագիր (Arnika – Toxics and Waste Programme), Հայ կանայք առողջության և առողջ շրջակա միջավայրի համար (Armenian Women for Health and Healthy Environment (AWHHE)), «ԷկոԼուր» բնապահպանական տեղեկատվական կենտրոն (Ecolur Environmental Information Centre) և Համայնքների մոբիլիզացման և աջակցության կենտրոն (Centre for Community Mobilization and Support (CCMS) ոչ կառավարական կազմակերպությունների կողմից (այսուհետ՝ ՈՉ կառավարական կազմակերպություններ) կատարվել են ուսումնասիրություններ: Չեխիայի ԱԳՆ-ի ֆինանսավորմամբ իրականացված այս ծրագրի շրջանակում Լոռու մարզի Ալավերդի համայնքում կատարվել է տնային պայմաններում պահվող հավերի ձվի նմուշառում: Արդյունքները տեղ են գտել զեկույցում:

Ախթալայի և Ալավերդու համայնքներում իրականացված կենսամոնիթորինգային ուսումնասիրությունները փաստում են, որ երեխաների մեզում մկնդեղի պարունակությունը հասել է մինչև 58 $\mu\text{g/g}$ կրեատինին: Միջազգային համեմատական տվյալների համատեքստում սա դիտարկվում է որպես բարձր ռիսկային ցուցանիշ: Այն հանդիսանում է առողջության վրա երկարաժամկետ բացասական ազդեցությունների հավանական ցուցիչ:

Իրավական տեսանկյունից նման տվյալներն առանցքային նշանակություն ունեն: Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքում առողջության համար բարձր ռիսկի առկայությունն ինքնին բավարար հիմք է: Այն թույլ է տալիս բարձրացնել Կոնվենցիայի խախտման հարց՝ անկախ մահ-

վան փաստից կամ տվյալ պահին առողջությանը հասցված ծանր վնասի առկայությունից¹⁶ :

Նույն կազմակերպությունների կողմից իրականացված մեկ այլ ծրագրի՝ «Փոխակերպման համագործակցության ծրագրի (Transformation Cooperation Programme)» շրջանակներում Լոռու մարզի Ալավերդի, Ախթալա, Թեղուտ, Շնող, Մեծ Այրում, Փոքր Այրում, Ճոճկան, Հաղպատ, Աքորի, Մղարթ, Արմանիս և այլ հարակից բնակավայրերում (մոտ 400 նմուշառում) կատարվել է ծանր մետաղների և կայուն օրգանական աղտոտիչների (ԿՕԱ) քարտեզագրմանը Հայաստանի Լոռու մարզի Թումանյանի և Ստեփանավանի շրջանների հանքարդյունաբերական տարածքներում (2018-2021թթ.) և կազմվել զեկույց:

2018–2023 թվականներին. Հայաստանի Հանրապետության տարբեր մարզերում իրականացված հետազոտություններն ընդգրկել են շրջակա միջավայրի բաղադրիչների (հող, նստվածք, փոշի, մակերևութային և ստորերկրյա ջուր), սննդամթերքի (գյուղատնտեսական արտադրանք, ձուկ, կաթնամթերք, տնային տնտեսություններում ստացված հավկիթներ) և բնակչության կենսաբանական նմուշների (մեզ, մազ, եղունգներ) հավաքագրում ու լաբորատոր վերլուծություն: Աշխատանքներն իրականացվել են միջազգային և հայաստանյան մասնագիտական կառույցների կողմից: Կիրառվել է ՄԱԿ-ի շրջակա միջավայրի ծրագրի (UNEP), Առողջապահության համաշխարհային կազմակերպության (WHO) և Եվրոպական միության ստանդարտներին համապատասխան մեթոդներ¹⁷ :

Նույն կազմակերպությունների կողմից իրապարակվել է «Թունավոր աղտոտման թեժ կետերը Հայաստանի հյուսիսում» («Toxic Hot Spots in Northern Armenia») զեկույցը և դրան հարակից հետազոտական նյութերը: Դրանց տվյալներով, 2018–2021 թվականներին Լոռու մարզի շուրջ 40.000 բնակչություն ունեցող Թումանյանի և Ստեփանավանի տարածաշրջաններում ուսումնասիրվել են 13 բնակավայրեր:

Հողի և նստվածքների նմուշներում արձանագրվել են մկնդեղի (As), կադմիումի (Cd), կապարի (Pb), պղնձի (Cu), ցինկի (Zn) և նիկելի (Ni) բարձր կոնցենտրացիաներ: Մի շարք կետերում աղտոտիչների մակարդակը գերազանցել է Եվրոպական միությունում և Հայաստանում սահմանված թույլատրելի նորմերը: Սա հատկապես նկատելի է հանքերին ու պոչամբարներին մոտ գտնվող բնակավայրերում, ինչպիսիք են Ալավերդին, Ախթալան, Մեծ Այրումը և Ճոճկանը¹⁸ :

2018 թվականի հուլիսին Ալավերդիում, Ախթալայում և Թեղուտում կատարված 58 նմուշների վերլուծությունը ցույց է տվել պղնձի (439 mg/kg), արսենի (15.9 mg/kg), կապարի (33.0 mg/kg) և ցինկի (258 mg/kg) բարձր պարունակություն: Ստացված այս

www.ardadatutyunjurnal.com

ցուցանիշները բնորոշ են մարդածին արդյունաբերական աղտոտման գոտիներին և վկայում են լուրջ էկոլոգիական ռիսկերի մասին: Առավել մտահոգիչ են հատկապես մանկական խաղահրապարակներում չափված արժեքները՝ 143 mg/kg As, >1000 mg/kg Cu և 200 mg/kg Pb, որոնք ռիսկերի ինտեգրացված գնահատման RISC մոդելով տվել են HQ = 2.9՝ արսենի համար: Սա վկայում է երեխաների առողջության համար անթույլատրելի ոչ քաղցկեղային վտանգի մակարդակի մասին [8, 9]:

Նույն կազմակերպությունները «Փոխակերպման համագործակցության» (Global Greengrants Fund, IPEN) ծրագրի շրջանակներում ուսումնասիրել են Լոռու մարզի հանքարդյունահանման և մետալուրգիական գործունեության ազդեցությունը շրջակա միջավայրի վրա: Հետազոտության արդյունքում կազմվել է «Ծանր մետաղները Հայաստանի Լոռու մարզի հանքարդյունահանման և մետալուրգիական տարածքների շրջակայքում» գեկույցը (Heavy metals in the surroundings of mining and metallurgical sites in the Lori region in Armenia): Ձեկույցի պատրաստման համար 2018 թվականի հուլիսին իրականացվել է նմուշառում: Ուսումնասիրվել է 60 շրջակա միջավայրի նմուշ (հող, նստվածք, խաղահրապարակների ավազ) և 14 մազի նմուշ Ալավերդի ու Հաղպատ համայնքներից: Հետազոտության արդյունքում հայտնաբերվել են պղինձ (Cu), մկնդեղ (As), կապար (Pb), ցինկ (Zn), մոլիբդեն (Mo), նիկել (Ni), կադմիում (Cd) և սնդիկ (Hg):

Թեև սնդիկի ցուցանիշը չի գերազանցել EPA-ի 1.0 mg/kg շեմը (մաքս = 0.246 mg/kg), սակայն այլ մետաղների բարձր կուտակումները և HQ-ի (առողջության ռիսկի գործակից) անընդունելի արժեքները փաստում են լուրջ վտանգների մասին:

Այս տվյալները հիմնավորում են Հայաստանում հանքարդյունաբերական թափոնների կառավարման, արտանետումների վերահսկողության և հանրային առողջության պահպանման սահմանադրաիրավական մեխանիզմների ուժեղացման անհապաղ անհրաժեշտությունը :

Նույն կազմակերպության կողմից իրականացված ուսումնասիրության շրջանակում հավաքագրվել է մեզի 73 նմուշ, որից 62-ը՝ ռիսկային բնակավայրերից, իսկ 11-ը՝ ստուգիչ (վերահսկողական) տարածքներից: Հետազոտությունն անցկացվել է «Նահատակ» պոչամբարի մոտակայքում գտնվող Մեծ Այրում, Փոքր Այրում, Ծոճկան և Շամլուղ համայնքներում: Կազմվել է գեկույց:

Ձեկույցի շրջանակում վերլուծվել է 73 անձից ստացված մեզի նմուշ, որոնցից 62-ը՝ ազդեցության գոտուց, իսկ 11-ը՝ վերահսկիչ տարածքից: Ուսումնասիրության արդյունքները ցույց են տվել, որ բոլոր նմուշներում հայտնաբերվել է մկնդեղ՝ 6–58 μg/g կրեատինին միջակայքում: Ամենաբարձր ցուցանիշները արձանագրվել են երեխաների մոտ, ինչը

միջազգային առողջապահական գրականության մեջ դիտարկվում է որպես հատուկ խոցելի խմբի վրա բարձր ռիսկի ցուցիչ:

Կադմիումի (քիմիական նշան Cd) պարունակությունը որոշ նմուշներում հասել է մինչև 1 μg/g կրեատինին: Այն համադրելի է բարձր աղտոտված արդյունաբերական գոտիներում արձանագրվող մակարդակների հետ: Բացի այդ, մեզում հայտնաբերվել են պղինձ (5–28 μg/g) և կապար (1–8 μg/g): Դրանց առավել բարձր արժեքները գրանցվել են աղտոտված տարածքներում բնակվող անձանց մոտ: Նման կենսաբանական ցուցանիշները Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի լույսի ներքո կարող են դիտարկվել որպես առողջության համար իրական և կանխատեսելի վտանգի ապացույց :

2025 թվականի հետազոտության շրջանակում իրականացվել է Վանաձորի քաղաքային հողի երկրաքիմիական ուսումնասիրություն՝ 1:25.000 մասշտաբով: Կիրառելով 0.25 × 0.25 կմ գրիդային ցանց՝ հողի վերին 5 սմ շերտից հավաքվել է ընդհանուր 355 նմուշ (յուրաքանչյուր 1 կմ՝ տարածքից՝ 16 նմուշ):

Կենսամոնիթորինգի նպատակով հետազոտվել են նաև մեզի 73 նմուշներ, որոնցից 62-ը վերցվել են հանքարդյունաբերական ազդեցության տակ գտնվող համայնքներից, իսկ 11-ը՝ ֆոնային տարածքներից:

Վերլուծությունը բացահայտել է, որ երեխաների մոտ որոշ նմուշներում պղինձի (Cu), երկաթի (Fe) և կապարի (Pb) մասով արձանագրվել է ոչ քաղցկեղային ռիսկի գերազանցում (HQ > 1): Միաժամանակ, քրոմի (Cr) և կապարի (Pb) համար որոշ դեպքերում գրանցվել է քաղցկեղածին ռիսկի վտանգավոր բարձրացում (CR > 10⁻⁶):

Այս տվյալները ցույց են տալիս, որ Վանաձորի և հարակից համայնքների հողերը և բնակչության կենսաբանական միջավայրերը կրում են հստակ տեղային ազդեցության հետքեր, ինչը պահանջում է աղտոտման աղբյուրների մոնիթորինգի, վերահսկողության և հանրային առողջության իրավական մեխանիզմների ուժեղացում Հայաստանի Հանրապետությունում²¹:

Նույն կազմակերպությունների հրապարակած «Ոսկու իրական գինը. ինչպես է ոսկու հանքարդյունաբերությունը աղտոտում շրջակա միջավայրը Հայաստանում» («The Price of Gold») գեկույցի համաձայն՝ 2022–2023 թվականներին ՀՀ չորս մարզերում իրականացվել են համալիր ուսումնասիրություններ: Ոսկու արդյունահանման և հարստացման տարածքների հողերում ու նստվածքներում արձանագրվել են մկնդեղի, կադմիումի, քրոմի և նիկելի բարձր կոնցենտրացիաներ:

Կենսաբանական նմուշների (մազ, մեզ) վերլուծությունը բացահայտել է ցուցանիշներ, որոնք գե-

www.aradaradatumjournal.com

րազանցում են ԱՄՆ Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոնների (CDC) և Եվրոպական միության (ԵՄ) սահմանած չափորոշիչները:

Այս գերազանցումները հատկապես մտահոգիչ են, քանի որ արձանագրվել են առավել խոցելի խմբերի՝ երեխաների և տարեցների մոտ²²:

Վերոհիշյալ փաստական և վիճակագրական տվյալները հաստատում են, որ Հայաստանի Հանրապետությունում նշված բնակավայրերում կյանքի և առողջության համար իրական և կանխատեսելի էկոլոգիական վտանգներ կան: Եվրոպական դատարանի դիրքորոշման համաձայն, կա անհրաժեշտություն ակտիվացնելու պետության դրական պարտավորությունների կատարումը Կոնվենցիայի 2-րդ հոդվածի շրջանակում: Եվրոպական դատարանն իր նախադեպային իրավունքում ամրագրել է պետության պարտավորությունը: Նախ՝ պետությունը պետք է գերծ մնա կյանքի իրավունքին կամայական միջամտությունից, և երկրորդ՝ կրում է պոզիտիվ պարտավորություն՝ ձեռնարկելու ողջամիտ ու համաչափ միջոցներ կյանքի համար վտանգավոր ռիսկերը կանխելու և նվազեցնելու նպատակով: Եվրոպական դատարանի ակտերի մեկնաբանությունը ցույց է տալիս, որ կյանքի իրավունքի պաշտպանությունը պահանջում է ոչ թե պարզապես արձագանք արդեն իսկ պատճառված վնասին, այլ կանխարգելիչ, ռիսկերի վրա հիմնված և համակարգային իրավական քաղաքականություն:

Դատարանի դիրքորոշման համաձայն՝ եթե պետական մարմինները տեղեկացված են եղել (կամ պարտավոր էին տեղեկացված լինել) շրջակա միջավայրի հնարավոր վտանգավոր ազդեցությունների մասին, սակայն չեն ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ, ապա առաջանում է կյանքի իրավունքի խախտում:^{23 24 25 26}

Հարկ է արձանագրել, որ Հայաստանի Հանրապետությունում բնապահպանական հիմնախնդիրները պահանջում են սահմանադրական և կոնվենցիոն չափանիշների վրա հիմնված համալիր իրավական գնահատում: Ինչպես նշվեց հոդվածում վկայակոչված Եվրոպական դատարանի վճիռներում, պետության պարտավորությունները պետք է ստանան նոր իրավական մեկնաբանություն:

Ինստիտուցիոնալ բարեփոխումների սահմանադրաիրավական ուղղությունները

Վերոհիշյալ վերլուծությունը թույլ է տալիս եզրահանգել, որ շրջակա միջավայրի պահպանության հիմնախնդիրների լուծումը պահանջում է սահմանադրաիրավական մակարդակի համակարգային և ռազմավարական մոտեցում: Այս մոտեցման առանցքում պետք է գտնվի մարդու հիմնարար իրավունքների արդյունավետ պաշտպանությունը

և պետության պոզիտիվ պարտավորությունների լիարժեք իրականացումը:

Հայաստանի Հանրապետության իրավակարգի համար անհրաժեշտ է օրենսդրության այնպիսի զարգացում, որտեղ էկոլոգիական ռիսկերի կանխարգելումը կդիտարկվի որպես սահմանադրական պարտականություն, այլ ոչ թե երկրորդային կարգի վարչարարական խնդիր: Սա կհանգեցնի այնպիսի համակարգի ձևավորմանը, որտեղ շրջակա միջավայրի պահպանության նորմերը կունենան անմիջական կիրառելիություն և կծառայեն որպես իրավակիրառական գործունեության ուղղակի չափանիշ²⁷:

Հոդվածի նախորդ բաժիններում ներկայացված միջազգային փորձի և ազգային խնդիրների համադրումը ցույց է տալիս, որ շրջակա միջավայրի պաշտպանության արդյունավետությունը մեծապես կախված է վերահսկողության ինստիտուցիոնալ մոդելից²⁸: Հայաստանի գործող համակարգում գերակշռում է խախտումներին արձագանքող մոտեցումը, մինչդեռ սահմանադրաիրավական տրամաբանությունը պահանջում է կանխարգելիչ վերահսկողության գերակայություն: Այդ նպատակով անհրաժեշտ է ինստիտուցիոնալ վերափոխում, որը կներառի՝

- շրջակա միջավայրի և հանրային առողջության ռիսկերի պարտադիր նախնական գնահատման մեխանիզմների ներդրում^{29 30},
- վերահսկող մարմինների գործառնական անկախության ամրապնդում³¹,
- մասնագիտական կարողությունների զարգացում և տվյալափոխման մոնիթորինգի համակարգերի կատարելագործում^{32 33 34}:

Նման մոտեցումը հնարավորություն կտա շրջակա միջավայրի պաշտպանությունը դարձնել կանխատեսելի, թափանցիկ և իրավականորեն վերահսկելի գործընթաց, ինչը համահունչ է թե՛ Սահմանադրության, թե՛ Կոնվենցիայի պահանջներին:

Հոդվածի ընդհանուր տրամաբանությունից բխում է նաև, որ շրջակա միջավայրի պաշտպանության համակարգում առանցքային դեր պետք է ունենա նաև դատական իշխանությունը: Դատական իշխանության համար անհրաժեշտ է ստեղծել ոչ միայն նորմատիվ, այլև մեթոդաբանական հիմքեր՝ շրջակա միջավայրին առնչվող գործերում անմիջականորեն կիրառելու Կոնվենցիայի կանոնները ինչպես նաև Սահմանադրության համապատասխան հոդվածների մեկնաբանությունը:

Դատական վերահսկողության այսպիսի զարգացումը կնպաստի սահմանադրական չափորոշիչների իրական ներթափանցմանը ազգային իրավական համակարգ և կապահովի իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների առկայություն:

Շրջակա միջավայրի պաշտպանության ժա-

www.aradaradutyjournal.com

մանակակից մոդելները հիմնված են ոչ միայն պետական վերահսկողության, այլև՝ հանրային մասնակցության արդյունավետության վրա: Միջազգային ստանդարտների և Օրիուսի կոնվենցիայի համատեքստում ակնհայտ է, որ հանրային մասնակցության մեխանիզմները պետք է ունենան ոչ թե ձևական, այլ իրական ազդեցություն: Հանրապետության համար սա ենթադրում է անցում ֆորմալ հռչակագրային թափանցիկությունից դեպի գործնական մասնակցություն:

Այս դեպքում տեղեկատվության մատչելիությունը, հանրային լսումները և արդարադատության հասանելիությունը պետք է իրական ազդեցություն ունենան վարչական ու դատական որոշումների բովանդակության վրա^{35 36 37} :

Գիտական նորույթ

Սույն հոդվածի գիտական նորույթը շրջակա միջավայրի պահպանության հիմնախնդիրների համալիր սահմանադրաիրավական վերաիմաստավորումն է: Անհրաժեշտ է Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի կառուցակարգերի հստակեցում:

Առաջին անգամ Հայաստանի վերաբերյալ կոնկրետ էմպիրիկ և վիճակագրական տվյալները (օդի աղտոտում, ծանր մետաղների կենսասոնիթորինգ, սննդային շղթայի աղտոտում) համակարգային կերպով համադրվում են միջազգային իրավունքի հետ:

Այս տվյալները վերլուծվում են Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի և Կոնվենցիայի 2-րդ ու 8-րդ հոդվածների պահանջների շրջանակում:

Հոդվածում գիտականորեն հիմնավորվում է այն դիրքորոշումը, որ շրջակա միջավայրի կանխատեսելի ռիսկերի առկայության դեպքում պետությունը պարտավոր է ակտիվացնել իր պոզիտիվ պարտավորությունները: Այս պարտավորությունը պետք է իրացվի անկախ այն հանգամանքից՝ արդեն իսկ առկա³⁸ է պատճառված անդառնալի վնասի փաստը, թե՛ ոչ:

Գիտական նորույթ է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության բնապահպանական դրույթների՝ մարդու իրավունքների վրա հիմնված դինամիկ մեկնաբանությունը: Այս մոտեցմամբ շրջակա միջավայրը դիտարկվում է որպես մարդու կյանքի, առողջության, ինչպես նաև անձնական ու ընտանեկան կյանքի հարգման իրավունքի նյութական հիմք:

Արդյունքում ձևավորվում է շրջակա միջավայրի պահպանության նոր սահմանադրաիրավական հայեցակարգ, որը կարող է ծառայել որպես տեսական և կիրառական հիմք Հայաստանի օրենսդրական, ինստիտուցիոնալ ու դատական բարեփոխումների համար:»

Գիտական առաջարկություններ

Պետության պոզիտիվ պարտավորությունների սահմանադրաիրավական կոնկրետացում

Առաջարկվում է օրենսդրական և սահմանադրաիրավական մակարդակներում հստակ ամրագրել պետության պարտավորությունը՝ ակտիվացնելու պոզիտիվ պարտականությունների իրացումը շրջակա միջավայրի կանխատեսելի ռիսկերի առկայության պարագայում:

Այս պահանջը պետք է ուղղակիորեն պայմանավորված լինի մարդու կյանքի, ինչպես նաև անձնական ու ընտանեկան կյանքի հարգման իրավունքների պաշտպանության անհրաժեշտությամբ

Կանխարգելիչ և ռիսկերի վրա հիմնված բնապահպանական մոդելի ներդրում

Անհրաժեշտ է անցում կատարել խախտումներին արձագանքող (ռեակտիվ) մոտեցումից դեպի կանխարգելիչ (պրոակտիվ) մոդելի: Այս նոր մոդելը պետք է հիմնված լինի էկոլոգիական ու առողջապահական ռիսկերի պարտադիր նախնական գնահատման և գիտական մոնիթորինգի արդյունքների իրավական ուժեղացման վրա:

Հանքարդյունաբերության և քաղաքային աղտոտման օրենսդրական խստացում

Առաջարկվում է հիմնարար վերանայման ենթարկել հանքարդյունաբերության և քաղաքային միջավայրի պաշտպանության վերաբերյալ օրենսդրությունը: Բարեփոխումների առանցքում պետք է դրվի մարդու կյանքի իրավունքի և առողջության պահպանման վրա ազդեցության գնահատման պարտադիր մեխանիզմի ներդրումը:

Դատական վերահսկողության սահմանադրաիրական իրավունքի զարգացում

Շրջակա միջավայրին վերաբերող վեճերը դատական պրակտիկայում պետք է գնահատվեն որպես սահմանադրական նշանակություն ունեցող գործեր:

Դատարանները պետք է ապահովեն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության և Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի նորմերի անմիջականորեն համադրված կիրառությունը:

Հանրային մասնակցության և էկոլոգիական ժողովրդավարության արդյունավետացում

Անհրաժեշտ է ապահովել հանրային մասնակցության իրական ազդեցությունը որոշումների կայացման գործընթացում: Դրա համար պետք է ընդլայնել տեղեկատվության մատչելիությունը, բարձրացնել հանրային լսումների իրավական նշանակությունը և երաշխավորել արդարադատության հասանելիությունը շրջակա միջավայրի հարցերով:

Մարդու իրավունքների վրա հիմնված միաս-

www.aradaradutyjournal.com

նական պետական ռազմավարություն

Առաջարկվում է մշակել շրջակա միջավայրի պահպանության միասնական պետական ռազմավարություն: Այն պետք է փոխկապակցի օրենսդրական, գործադիր և դատական քաղաքականությունները՝ մարդու իրավունքների ու կայուն զարգացման սկզբունքների շուրջ:

Հողվածում ներկայացված նպատակներին հասնելու համար անհրաժեշտ է պետական միջոցներով իրականացնել համապարփակ փորձագիտական մոնիթորինգ: Սա թույլ կտա ամբողջական գնահատական տալ Հայաստանի շրջակա միջավայրի իրական վիճակին:

Այս հետազոտության արդյունքների հիման վրա պետք է մշակվի գործողությունների պետական ռազմավարություն՝ առկա էկոլոգիական խնդիրներին և առողջապահական ռիսկերին արդյունավետ հակազդելու նպատակով:

Եզրակացություն

Կատարված համալիր վերլուծությունը թույլ է տալիս եզրահանգել, որ շրջակա միջավայրի պահպանության հիմնախնդիրները Հայաստանում այլևս չեն կարող դիտարկվել զուտ էկոլոգիական կամ վարչարարական տիրույթում: Դրանք ձևավորում են սահմանադրաիրավական հարաբերությունների մի համալիր, որն ուղղակիորեն առնչվում է մարդու կյանքի, առողջության և անձնական ու ընտանեկան կյանքի հարգման իրավունքների արդյունավետ իրացմանը:

Հողվածում ներկայացված վիճակագրական և փաստական տվյալները վկայում են մարդու կյանքի ու առողջության համար իրական և կանխատեսելի ռիսկերի առկայության մասին: Սա պետության համար առաջացնում է անհապաղ պոզիտիվ պարտավորություն՝ ակտիվացնելու բոլոր անհրաժեշտ պաշտպանական մեխանիզմները:

¹ Տե՛ս, Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիա (1950)

² Տե՛ս, Բոյլ, Ա. (2012). Մարդու իրավունքները և շրջակա միջավայրը. Եվրոպական միջազգային իրավունքի հանդես

³ Տե՛ս, Նոբս, Ջ. Հ. (2018). Մարդու իրավունքների և շրջակա միջավայրի շրջանակային սկզբունքները. ՄԱԿ-ի հատուկ զեկուցողի զեկույց

⁴ Տե՛ս, Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիա (1950)

⁵ Տե՛ս, Önerioldiz v. Turkey, GC (Օներյոլդիզ ընդդեմ Թուրքիայի, Մեծ պալատ, 30.11.2004թ (զանգատ՝ 48939/99)

⁶ Տե՛ս, Budayeva and Others v. Russia, (Բուդասևան և այլք ընդդեմ Ռուսաստանի, 20.03.2008թ (զանգատներ՝ 15339/02, 21166/02, 20058/02, 11673/02, 15343/02 միացված գործեր),

⁷ Տե՛ս, López Ostra v. Spain, (Լոպես Օստրան ընդդեմ Իսպանիայի, 09.12.1994թ (զանգատ՝ 16798/90)

⁸ Fadeyeva v. Russia, (Ֆադեևան ընդդեմ Ռուսաստանի, 09.06.2005թ (զանգատ՝ 55723/00)

⁹ Տե՛ս, Առողջապահության համաշխարհային կազմակերպություն (2013). Առողջության ներառումը շրջակա միջավայրի ազդեցության գնահատումներում. ԱՀԿ Եվրոպայի տարածաշրջանային գրասենյակ,

¹⁰ Տե՛ս, Առողջապահության համաշխարհային կազմակերպություն (2017). Ռազմավարական բնապահպանական գնահատում և առողջություն. ԱՀԿ Եվրոպայի տարածաշրջանային գրասենյակ.

¹¹ Տե՛ս, Առողջապահության համաշխարհային կազմակերպություն (2021). Air Quality Guidelines: Global Update 2021

¹² Տե՛ս Առողջապահության համաշխարհային կազմակերպություն (2023). WHO Ambient Air Pollution Database

¹³ Տե՛ս, ՄԱԿ-ի շրջակա միջավայրի ծրագիր (2019). Շրջակա միջավայրի իրավունքի գերակայության առաջին գլոբալ զեկույցը

¹⁴ Տե՛ս, ՄԱԿ Եվրոպայի տնտեսական հանձնաժողով (UNECE) (2014). Օրհուսի կոնվենցիայի իրականացման ուղեցույց (UNECE (2014). Aarhus Convention Implementation Guide),

¹⁵ Տե՛ս Համաշխարհային ռեսուրսների ինստիտուտ (World Resources Institute)/ «Մատչելիության նախաձեռնություն» (The Access Initiative) (2020). Էկոլոգիական ժողովրդավարության ինդեքս (World Resources Institute/The Access Initiative (2020). Environmental Democracy Index),

¹⁶ Տե՛ս «Առնիկա» Թունավոր նյութերի և թափոնների ծրագիր (Չեխիա), Հայ կանայք առողջության և առողջ շրջակա միջավայրի համար). «ԷկոԼուր» բնապահպանական տեղեկատվական կենտրոն և Համայնքների մոբիլիզացման և աջակցության կենտրոն ոչ կառավարական կազմակերպության կողմից կատարված ուսումնասիրության արդյունքում կազմված զեկույց:

¹⁷ Տե՛ս, «Առնիկա» – Թունավոր նյութերի և թափոնների ծրագիր (Չեխիա), Համայնքային մոբիլիզացիայի և աջակցության կենտրոն (CCMS, Ալավերդի, Հայաստան) «ԷկոԼուր» բնապահպանական տեղեկատվական

www.aradaradutyjournal.com

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

կենտրոն ոչ կառվարական կազմակերպության կողմից իրականացված «Փոխակերպման համագործակցության ծրագրի» շրջանակներում ծանր մետաղների և կաշուն օրգանական աղտոտիչների (ԿՕԱ) քարտեզագրմանը Հայաստանի Լոռու մարզի Թումանյանի և Ստեփանավանի շրջանների հանքարդյունաբերական տարածքներում (2018-2021թթ.) կատարված ուսումնասիրության արդյունքում կազմված զեկույցը:

¹⁸ Տե՛ս, «Առնիկա» Թունավոր նյութերի և թափոնների ծրագիր (Չեխիա), Հայ կանայք առողջության և առողջ շրջակա միջավայրի համար, «ԷկոԼուր» բնապահպանական տեղեկատվական կենտրոն և Համայնքների մոբիլիզացման և աջակցության կենտրոն ոչ կառվարական կազմակերպության կողմից Չեխիայի Հանրապետության արտաքին գործերի նախարարության և Շվեդիայի կառավարություն կողմից ֆինանսավորման արդյունքում կատարված Լոռու մարզի Ալավերդի և Ախթալա հանքարդյունաբերական շրջաններում, և նմուշառվել է 9 ֆերմերային տնտեսություններ՝ հողի, մթերքների և մարդկային մազերի նմուշներ ուսումնասիրության արդյունքում կազմված զեկույցը:

¹⁹ Տե՛ս, «Առնիկա» Թունավոր նյութերի և թափոնների ծրագիր (Չեխիա), Հայ կանայք առողջության և առողջ շրջակա միջավայրի համար, «ԷկոԼուր» բնապահպանական տեղեկատվական կենտրոն և Համայնքների մոբիլիզացման և աջակցության կենտրոն ոչ կառվարական կազմակերպության կողմից Չեխիայի Հանրապետության Արտաքին գործերի նախարարության կողմից ֆինանսավորման արդյունքում «Փոխակերպման համագործակցության ծրագիր», (Global Greengrants Fund, IPEN) ծրագրի շրջանակներում Լոռու մարզի Ալավերդի, Ախթալա և Թեղուտ տարածաշրջանների՝ հանքարդյունահանման և մետալուրգիական գործունեության հետևանքով ծանր մետաղներով շրջակա միջավայրի աղտոտման առկայությունը ուսումնասիրելու արդյունքում կազմվել է «Ծանր մետաղները Հայաստանի Լոռու մարզի հանքարդյունահանման և մետալուրգիական տարածքների շրջակայքում (Heavy metals in the surroundings of mining and metallurgical sites in the Lori region in Armenia)» զեկույցը:

²⁰ Տե՛ս, «Առնիկա» Թունավոր նյութերի և թափոնների ծրագիր (Չեխիա) (Arnika – Toxics and Waste Programme), Համայնքային մոբիլիզացիայի և աջակցության կենտրոն (CCMS, Ալավերդի, Հայաստան) «ԷկոԼուր» բնապահպանական տեղեկատվական կենտրոն (Ecolur Environmental Information Centre) ոչ կառվարական կազմակերպության կողմից Լոռու մարզի Մեծ Այրում, Փոքր Այրում, Ճոճկան և Շամուղ համայնքներից ստացված 73 մարդուց նմուշառված մեզի նմուշի (62՝ ռիսկային տարածքներից, 11՝ վերահսկողական տարածքից) (Նահատակ պոչամբարի մոտակայքում գտնվող տարածք) ուսումնասիրության արդյունքում կազմված զեկույցը:

²¹ Տե՛ս, Գ. Թեփանոսյանի (գլխավոր հեղինակ), Թ. Ենոքյանի, Ժ. Պողոսյանի, Ա. Գևորգյանի և Լիլիթ Սահակյանի հեղինակած գիտական հոդվածը՝ «Վանաձոր քաղաքի հողերում պոտենցիալ թունավոր տարրերի տարածական բաշխման օրինաչափությունների և ծագման» մասին:

²² Տե՛ս, «Առնիկա» Թունավոր նյութերի և թափոնների ծրագիր (Չեխիա) (Arnika – Toxics and Waste Programme), Համայնքային մոբիլիզացիայի և աջակցության կենտրոն (CCMS, Ալավերդի, Հայաստան) «ԷկոԼուր» բնապահպանական տեղեկատվական կենտրոն (Ecolur Environmental Information Centre) ոչ կառվարական կազմակերպության կողմից Արարատի մարզի Արարատի և Սուրենավանի (ոսկու վերամշակման գործարան), Լոռու մարզի Քարաբերդ (գործող ոսկու հանք) Կոտայքի մարզի Մեղրաձոր (ոսկու հանք և վերամշակման գործարան), Արագածոտնու մարզի Մելիքգյուղ (փակված ոսկու հանք) համայնքից ստացված նմուշները (55 միջավայրի նմուշ՝ հող, մտավածքներ, հանքային թափոններ և 83 կենսաբանական նմուշ՝ մեզ և մազեր տեղական բնակիչներից) համայնքից ստացված նմուշների ուսումնասիրության արդյունքներով կազմված «Ոսկու իրական գինը: Ինչպես է ոսկու արդյունահանումը ազդում ծանր մետաղներով աղտոտվածության վրա Հայաստանում» («THE PRICE OF GOLD: How gold mining affects pollution with heavy metals in Armenia») զեկույցը:

²³ Տե՛ս, Öneri v. Turkey, GC (Օներյուրըզ ընդդեմ Թուրքիայի, Մեծ պալատ, 30.11.2004թ (գանգատ՝ 48939/99) ՄԻԵԳ-ի վճիռը: (ՄԻԵԳ-ը առաջին անգամ հաստատել է պետության դրական պարտավորությունները կյանքի իրավունքի պաշտպանության համար՝ շրջակա միջավայրի ոլորտում),

²⁴ Տե՛ս, Budayeva and Others v. Russia, (Բուդայևան և այլք ընդդեմ Ռուսաստանի, 20.03.2008թ (գանգատներ՝ 15339/02, 21166/02, 20058/02, 11673/02, 15343/02 միացված գործեր) ՄԻԵԳ-ի վճիռը:

²⁵ Տե՛ս, López Ostra v. Spain, (Լոպես Օստրան ընդդեմ Իսպանիայի, 09.12.1994թ (գանգատ՝ 16798/90) ՄԻԵԳ-ի վճիռը: (Այս գործ վերաբերվում է արդյունաբերական աղտոտումից մասնավոր կյանքի պաշտպանության մասին և առաջին նախադեպը, որը կապեց բնապահպանական աղտոտումը և 8-րդ հոդվածը: Հիմք դարձավ բազմաթիվ հետագա գործերի համար),

²⁶ Տե՛ս, Fadeyeva v. Russia, (Ֆադեևան ընդդեմ Ռուսաստանի, 09.06.2005թ (գանգատ՝ 55723/00) ՄԻԵԳ-ի վճիռը: (Այս գործը վերաբերվում է մետաղագործական արդյունաբերությունից օդի աղտոտման մասին և ՄԻԵԳ-ը հստակեցրեց պետության պարտավորությունները արդյունաբերական աղտոտման կարգավորման մեջ):

²⁷ Տե՛ս, Բոյլ, Ա. (2012). Մարդու իրավունքները և շրջակա միջավայրը. Եվրոպական միջազգային իրավունքի հանդես

²⁸ Տե՛ս, ՄԱԿ-ի շրջակա միջավայրի ծրագիր (2019). Շրջակա միջավայրի իրավունքի գերակայության առաջին գլոբալ զեկույցը

²⁹ Տե՛ս, Առողջապահության համաշխարհային կազմակերպություն (2013). Առողջության ներառումը շրջակա միջավայրի ազդեցության գնահատումներում. ԱՀԿ Եվրոպայի տարածաշրջանային գրասենյակ

³⁰ Տե՛ս, Առողջապահության համաշխարհային կազմակերպություն (2017). Ռ-ազմավարական բնապահպանական գնահատում և առողջություն. ԱՀԿ Եվրոպայի տարածաշրջանային գրասենյակ

www.aradaradutyjournal.com

- ³¹ Տե՛ս, Վենետիկի հանձնաժողով (2010). Ջեկույց դատական համակարգի անկախության վերաբերյալ
- ³² Տե՛ս, Առողջապահության համաշխարհային կազմակերպություն (2021). Air Quality Guidelines: Global Update 2021
- ³³ Տե՛ս, Առողջապահության համաշխարհային կազմակերպություն (2023). WHO Ambient Air Pollution Database
- ³⁴ Տե՛ս, ՄԱԿ-ի շրջակա միջավայրի ծրագիր (2019). Շրջակա միջավայրի իրավունքի գերակայության առաջին գլոբալ զեկույցը
- ³⁵ Տե՛ս, Միավորված ազգերի կազմակերպության Եվրոպայի տնտեսական հանձնաժողով (UNECE) (2014). Օրինակ կոնվենցիայի իրականացման ուղեցույց (UNECE (2014). Aarhus Convention Implementation Guide),
- ³⁶ Տե՛ս, Համաշխարհային ռեսուրսների ինստիտուտ (World Resources Institute)/ «Մատչելիության նախաձեռնություն» (The Access Initiative) (2020). Էկոլոգիական ժողովրդավարության ինդեքս (World Resources Institute/The Access Initiative (2020). Environmental Democracy Index),
- ³⁷ Տե՛ս, Նոբս, Ջ. Հ. (2018). Մարդու իրավունքների և շրջակա միջավայրի շրջանակային սկզբունքները. ՄԱԿ-ի հատուկ զեկույցողի զեկույց

Գրականություն և օգտագործված նյութեր
Նորմատիվ ակտեր

- 1. Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն (1995, փոփոխ.՝ 2015, 2021)
- 2. Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիա (1950) Եվրոպական դատարանի նախադեպային ակտեր
- 3. Öneriyildiz v. Turkey, GC (Օներյիլդիզ ընդդեմ Թուրքիայի, Մեծ պալատ, 30.11.2004թ (զանգատ՝ 48939/99) ՄԻԵԴ-ը առաջին անգամ հաստատել է պետության դրական պարտավորությունները կյանքի իրավունքի (Կոնվենցիայի 2-րդ հոդված) պաշտպանության համար՝ շրջակա միջավայրի ոլորտում),
- 4. Budayeva and Others v. Russia, (Բուդասևան և այլք ընդդեմ Ռուսաստանի, 20.03.2008թ (զանգատներ՝ 15339/02, 21166/02, 20058/02, 11673/02, 15343/02 միացված գործեր), այս գործը վերաբերում է բնական աղետներից պաշտպանության պետական պարտավորություններին),
- 5. López Ostra v. Spain, (Լոպես Օստրան ընդդեմ Իսպանիայի, 09.12.1994թ (զանգատ՝ 16798/90) այս գործ վերաբերվում է արդյունաբերական աղտոտումից մասնավոր կյանքի պաշտպանության մասին և առաջին նախադեպը, որը կապեց բնապահպանական աղտոտումը և 8-րդ հոդվածը: Հիմք դարձավ բազմաթիվ հետագա գործերի համար),
- 6. Fadeyeva v. Russia, (Ֆադեևան ընդդեմ Ռուսաստանի, 09.06.2005թ (զանգատ՝ 55723/00) գործը վերաբերվում է մետաղագործական արդյունաբերությունից օդի աղտոտման մասին և ՄԻԵԴ-ը հստակեցրեց պետության պարտավորությունները արդյունաբերական աղտոտման կարգավորման մեջ:

Միջազգային կազմակերպությունների զեկույցներ

- 7. Առողջապահության համաշխարհային կազմակերպություն (2013). Առողջության ներառումը շրջակա միջավայրի ազդեցության գնահատումներում. ԱՀԿ Եվրոպայի տարածաշրջանային գրասենյակ
- 8. Առողջապահության համաշխարհային կազմակերպություն (2017). Ռազմավարական բնապահպանական գնահատում և առողջություն. ԱՀԿ Եվրոպայի տարածաշրջանային գրասենյակ
- 9. Առողջապահության համաշխարհային կազմակերպություն (2021). Air Quality Guidelines: Global Update 2021
- 10. Առողջապահության համաշխարհային կազմակերպություն (2023). WHO Ambient Air Pollution Database
- 11. ՄԱԿ-ի շրջակա միջավայրի ծրագիր (2019). Շրջակա միջավայրի իրավունքի գերակայության առաջին գլոբալ զեկույցը
- 12. Վենետիկի հանձնաժողով (2010). Ջեկույց դատական համակարգի անկախության վերաբերյալ
- 13. Միավորված ազգերի կազմակերպության Եվրոպայի տնտեսական հանձնաժողով (UNECE) (2014). Օրինակ կոնվենցիայի իրականացման ուղեցույց (UNECE (2014). Aarhus Convention Implementation Guide),
- 14. Համաշխարհային ռեսուրսների ինստիտուտ (World Resources Institute)/ «Մատչելիության նախաձեռնություն» (The Access Initiative) (2020). Էկոլոգիական ժողովրդավարության ինդեքս (World Resources Institute/The Access Initiative (2020). Environmental Democracy Index),

Գիտական նյութեր

- 15. Բոյլ, Ա. (2012). Մարդու իրավունքները և շրջակա միջավայրը. Եվրոպական միջազգային իրավունքի հանդես
- 16. Նոբս, Ջ. Հ. (2018). Մարդու իրավունքների և շրջակա միջավայրի շրջանակային սկզբունքները. ՄԱԿ-ի հատուկ զեկույցողի զեկույց
- 17. Եվրոպական միություն (2008). Դիրեկտիվ 2008/99/EC՝ շրջակա միջավայրի պաշտպանության մասին՝ քրեական իրավունքի միջոցներով
- 18. Գևորգ Թեփանոսյանի (գլխավոր հեղինակ), Թաթևիկ Ենոբյանի, Ժենյա Պողոսյանի, Աստղիկ Գևորգյանի և Լիլիթ Սահակյանի հեղինակած «Վանաձոր քաղաքի հողերում պոտենցիալ բուժավոր տարրերի տարածական բաշխման օրինաչափությունների և ծագման» գիտական հոդված:

Հետազոտական զեկույցներ

- 19. «Առնիկա» – Թունավոր նյութերի և թափոնների ծրագիր (Չեխիա) (Arnika – Toxics and Waste Programme), Հայ կանայք առողջության և առողջ շրջակա միջավայրի համար (Armenian Women for Health and Healthy Environment

- (AWHHE)). «ԷկոԼուր» բնապահպանական տեղեկատվական կենտրոն (Ecolur Environmental Information Centre) և Համայնքների մոբիլիզացման և աջակցության կենտրոն (Centre for Community Mobilization and Support (CCMS)) ոչ կառավարական կազմակերպության կողմից կազմված զեկույց
20. «Առնիկա» Թունավոր նյութերի և թափոնների ծրագիր (Չեխիա) (Arnika – Toxics and Waste Programme), Հայ կանայք առողջության և առողջ շրջակա միջավայրի համար (Armenian Women for Health and Healthy Environment (AWHHE)). «ԷկոԼուր» բնապահպանական տեղեկատվական կենտրոն (Ecolur Environmental Information Centre) և Համայնքների մոբիլիզացման և աջակցության կենտրոն (Centre for Community Mobilization and Support (CCMS)) ոչ կառավարական կազմակերպության կողմից կազմված զեկույց:
21. «Առնիկա» – Թունավոր նյութերի և թափոնների ծրագիր (Չեխիա) (Arnika – Toxics and Waste Programme), Հայ կանայք առողջության և առողջ շրջակա միջավայրի համար (Armenian Women for Health and Healthy Environment (AWHHE)). «ԷկոԼուր» բնապահպանական տեղեկատվական կենտրոն (Ecolur Environmental Information Centre) և Համայնքների մոբիլիզացման և աջակցության կենտրոն (Centre for Community Mobilization and Support (CCMS)) ոչ կառավարական կազմակերպության կողմից կազմված զեկույց:
22. «Առնիկա» Թունավոր նյութերի և թափոնների ծրագիր (Չեխիա) (Arnika – Toxics and Waste Programme), Համայնքային մոբիլիզացիայի և աջակցության կենտրոն (CCMS, Ալավերդի, Հայաստան) «ԷկոԼուր» բնապահպանական տեղեկատվական կենտրոն (Ecolur Environmental Information Centre) ոչ կառավարական կազմակերպության կողմից Լոռու մարզի Մեծ Այրում, Փոքր Այրում, Դոճկան և Շամուղ համայնքներից ստացված 73 մեզի նմուշ (62՝ ռիսկային տարածքներից, 11՝ վերահսկողական տարածքից) Նահատակ պոչամբարի մոտակայքում գտնվող տարածի վերաբերյալ կազմված զեկույց:
23. «Առնիկա» Թունավոր նյութերի և թափոնների ծրագիր (Չեխիա) (Arnika – Toxics and Waste Programme), Համայնքային մոբիլիզացիայի և աջակցության կենտրոն (CCMS, Ալավերդի, Հայաստան) «ԷկոԼուր» բնապահպանական տեղեկատվական կենտրոն (Ecolur Environmental Information Centre) ոչ կառավարական կազմակերպության կողմից իրականացված «Փոխակերպման համագործակցության ծրագրի (Transformation Cooperation Programme)» շրջանակներում Լոռու մարզի Ալավերդի, Ախթալա, Թեղուտ, Շնող, Մեծ Այրում, Փոքր Այրում, Դոճկան, Հաղպատ, Աբրի, Մղարթ, Արմանիս և այլ հարակից բնակավայրերում (մոտ 400 նմուշառում) կատարված ուսումնասիրության արդյունքում կազմված զեկույց:
24. Arnika, EcoLur, CCMS (2019). Toxic Hot Spots in Northern Armenia (Թունավոր աղտոտման թեժ կետերը Հայաստանի հյուսիսում). Հետազոտական զեկույց. Prague/Yerevan
25. «Առնիկա» Թունավոր նյութերի և թափոնների ծրագիր (Չեխիա) (Arnika – Toxics and Waste Programme), Համայնքային մոբիլիզացիայի և աջակցության կենտրոն (CCMS, Ալավերդի, Հայաստան) «ԷկոԼուր» բնապահպանական տեղեկատվական կենտրոն (Ecolur Environmental Information Centre) ոչ կառավարական կազմակերպության կողմից Լոռու մարզի Քարաբերդ (գործող ոսկու հանք) Կոտայքի մարզի Մեղրածոր (ոսկու հանք և վերամշակման գործարան), Արագածոտնու մարզի Մելիքգյուղ (փակված ոսկու հանք) համայնքից ստացված նմուշները (55 միջավայրի նմուշ՝ հող, մստվածքներ, հանքային թափոններ և 83 կենսաբանական նմուշ՝ մեզ և մագեր տեղական բնակիչներից) համայնքից ստացված նմուշների ուսումնասիրություն և կազմվել է «Ոսկու իրական գինը: Ինչպես է ոսկու արդյունահանումը ազդում ծանր մետաղներով աղտոտվածության վրա Հայաստանում» («THE PRICE OF GOLD: How gold mining affects pollution with heavy metals in Armenia») կազմված զեկույց: Arnika, EcoLur, CCMS (2023). The Price of Gold: How Gold Mining Pollutes the Environment in Armenia (Ոսկու իրական գինը. Ինչպես է ոսկու հանքարդյունահանությունը աղտոտում շրջակա միջավայրը Հայաստանում). Հետազոտական զեկույց. Prague/Yerevan

РЕЗЮМЕ

Конституционно-правовые механизмы противодействия современным вызовам обеспечения охраны окружающей среды

В статье исследуются современные проблемы охраны окружающей среды в Республике Армения в контексте конституционно-правовых и институциональных реформ 2018–2023 гг. Обосновано, что экологическая безопасность является межотраслевой категорией, напрямую связанной с реализацией фундаментальных прав человека, прежде всего права на жизнь (ст. 2 ЕКПЧ) и права на уважение частной и семейной жизни и жилища (ст. 8 ЕКПЧ). На основе эмпирических данных и международных оценок впервые для Армении проведена системная правовая интерпретация экологических рисков, включая загрязнение атмосферного воздуха, почв, водных экосистем и пищевой цепи.

Анализ показал, что среднегодовая концентрация PM_{2.5} в Ереване (2021–2023 гг.) достигает 35–40 $\mu\text{g}/\text{m}^3$, что многократно превышает безопасный уровень ВОЗ (5 $\mu\text{g}/\text{m}^3$) и коррелирует с ростом респираторной и сердечно-сосудистой заболеваемости. В горнопромышленных районах Лорийской области выявлены повышенные уровни тяжёлых металлов (As, Pb, Cu, Zn, Cd, Ni) в почвах и биологических образцах населения, причём у детей значения As в моче достигали 58 $\mu\text{g}/\text{g}$ креатинина, сопровождаясь превышением неканцерогенного риска ($\text{HQ} > 1$). Исследования домашних яиц в Алаверди подтвердили превышение допустимых уровней стойких органических загрязнителей (POPs – PCDD/F и диоксиноподобных PCB), что указывает на высокую вероятность передачи токсикантов по пищевой цепи и риск межпоколенческого переноса загрязнения.

С опорой на прецедентную практику ЕСПЧ подчёркнуто, что осведомлённость государства о предсказуемых экологических угрозах при отсутствии своевременных превентивных мер образует самостоятельный предмет конституционной и конвенционной ответственности, независимо от факта наступившего необратимого вреда.

Предложены приоритетные направления модернизации правового и институционального механизма: конкретизация позитивных обязательств государства в экологической сфере, переход к превентивной модели контроля с обязательной оценкой воздействия на здоровье населения (НИА), усиление независимости надзорных органов, развитие судебного конституционно-ориентированного контроля, повышение эффективности экологической демократии и разработка единой человекоцентричной государственной стратегии охраны окружающей среды. Обоснована необходимость проведения государственной комплексной экспертизы экологического состояния Армении как основы для дальнейших реформ и устойчивой экологической политики.

Ключевые слова: окружающая среда, экологическая безопасность, устойчивое развитие, позитивные обязательства государства, права человека, биомониторинг, POPs, НИА, судебный контроль, Республика Армения.

Karen Tumanyan

SUMMARY

Constitutional-Legal Mechanisms for Countering Contemporary Challenges in Environmental Protection

This article examines the contemporary challenges of environmental protection in the Republic of Armenia within the broader context of constitutional, legislative, and institutional modernization (2018–2023). The study substantiates that environmental safety is no longer a purely administrative or sector-specific policy domain but constitutes a constitutional-legal category that directly affects the effective realization of fundamental human rights, particularly the right to life (Article 2 ECHR) and the right to respect for private and family life and home (Article 8 ECHR).

For the first time in relation to Armenia, the article integrates empirical evidence and international assessments into a systemic constitutional-rights-based legal analysis of environmental risks. Key findings indicate that average annual PM_{2.5} concentrations in Yerevan (2021–2023) reached 35–40 $\mu\text{g}/\text{m}^3$, significantly exceeding the WHO safe threshold (5 $\mu\text{g}/\text{m}^3$), and correlate with increased respiratory and cardiovascular disease burdens. In mining-impacted communities of the Lori region (Alaverdi, Akhtala, Chochkan, Mets Ayrum, Teghut), laboratory analyses of soil, sediments, and human biomonitoring samples revealed elevated levels of heavy metals (As, Pb, Cu, Zn, Cd, Ni). Notably, arsenic levels in children's urine samples reached 58 $\mu\text{g}/\text{g}$ creatinine, accompanied by non-carcinogenic risk exceedances ($\text{HQ} > 1$), identifying children as a critically vulnerable exposure group. Additionally, free-range eggs collected in Alaverdi showed exceedances of persistent organic pollutants (POPs – PCDD/F and dioxin-like PCBs), demonstrating the high probability of pollutant transfer through the food chain and the potential for intergenerational exposure.

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

In light of established ECtHR jurisprudence, the article emphasizes that state awareness of foreseeable environmental threats, combined with failure to implement timely preventive and monitoring measures, raises independent questions of constitutional and convention-based responsibility, irrespective of proven irreversible harm.

The study proposes key directions for strengthening Armenia's legal and institutional framework: explicit definition of the state's positive environmental obligations as components of human-rights protection, transition from reactive enforcement to preventive risk-based regulation, introduction of mandatory Health Impact Assessment (HIA), reinforcement of the functional independence of environmental oversight bodies, constitutional mainstreaming of environmental adjudication standards, and development of a unified human-rights-centered national environmental strategy. The article concludes by recommending the implementation of a state-funded comprehensive environmental assessment and expert examination to generate a data-driven foundation for sustainable policy and future constitutional-legal reforms.

Key words: environment, environmental safety, constitutional obligations, human rights, mining pollution, heavy metals, biomonitoring, POPs, HIA, judicial control, Republic of Armenia.

Բնագիրը ներկայացվել է 07.01.2026թ.
Ընդունվել է տպագրության 18.02.26թ.